

«Կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե»

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 40/3

21 օգոստոսի 2013 թ.

Քննարկվեց Ա/Ձ Վարդիթեր Խաչատրյանի 15.07.2013 թ-ի բողոքը «ԿԱ ՊԵԿ Էրեբունու ՀՏ 24.06.2013 թ-ի թիվ 2122045 ստուգման ակտի դեմ:

Համաձայն «ԿԱ ՊԵԿ Էրեբունու ՀՏ պետի 13.06.2013 թ-ի թիվ 2122045 հանձնարարագրի Ա/Ձ Վարդիթեր Խաչատրյանի մոտ կատարվել է հսկիչ-դրամակազմի մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է «ԿԱ ՊԵԿ Էրեբունու ՀՏ 24.06.2013 թ-ի թիվ 2122045 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 150.000 դրամ:

Ա/Ձ Վարդիթեր Խաչատրյանի կողմից ստուգման ակտի դեմ 15.07.2013 թ-ին «ԿԱ պետական եկամուտների կոմիտե» ներկայացվել է բողոք:

«ԿԱ ՊԵԿ» հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով Ա/Ձ Վարդիթեր Խաչատրյանի և ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց ներկայացրած փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Սույն գործի վերաբերյալ հարկ է նշել, որ «ԿԱ ՊԵԿ» հետաքննության վարչությունում փաստաթղթեր են ստացվել Ա/Ձ Վարդիթեր Խաչատրյանի վերաբերյալ:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի համաձայն. «Վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե՝ ա) անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը»:

Քննարկվող դեպքում հաշվի առնելով, որ «ԿԱ ՊԵԿ» հետաքննության վարչությունում նյութեր են նախապատրաստվում Ա/Ձ Վարդիթեր Խաչատրյանի գործունեության կապակցությամբ քրեական գործի հարուցման հարցը պարզելու նպատակով, հետևապես անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը, մինչև քրեական դատավարության կարգով որոշում կայացնելը:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի դրույթներով՝ Հանձնաժողովը գտնում է, որ Ա/Ձ Վարդիթեր Խաչատրյանի 15.07.2013 թ-ի բողոքի հիման վրա «ԿԱ պետական եկամուտների կոմիտե»-ում հարուցված վարչական վարույթը ենթակա է կասեցման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

Ա/Ձ Վարդիթեր Խաչատրյանի 15.07.2013 թ-ի բողոքի հիման վրա «ԿԱ պետական եկամուտների կոմիտե»-ում հարուցված վարչական վարույթը կասեցնել:

Հանձնաժողովի նախագահ



S.ԲԱՐՍԵՂՅԱՆ